ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 177, 19.12.2017թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	140,000 հատ	600.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական ընկերության արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՑՊ-041-12/17 որոշում («ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի Գլխավոր տնօրենի որոշումը կցվում է):

NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

22 դեկտեմբերի 2017 թվականի N ՑՊ-041-12/17

ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի հայտը 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 200,000 (երկու հարյուր հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 22-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով, 16-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 200,000 (երկու հարյուր հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMARBKB2FER7 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ARBKB2F հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 27-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am